# ԱՄՆ կոնգրեսը դատապարտում է հակահայ արարքները

ՎԱՇԻՆԳՏՈՆ.- Հունիսի 15-ին Մ. Նահանգների Կոնգրեսի ներկայացուցիչների պալատը միաձայնությամբ վավերացրեց իր անդամներից Ուեյն Սուընզի եւ Ուիլյամ Բրումֆիլդի կողմից ներկայացված բանաձեւը, որը դատապարտում է Ադրբեջանում, Ղարաբաղում եւ Հայաստանում հայ ազգաբնակչության դեմ գործադրվող բռնարարքներն ու ճնշումները:

*«Արտաքին օգնության արտոնության թիվ 2508 որոշում»* անունով ծանոթ բանաձեւին որպես հավելված ներկայացված որոշումը, բաղկացած 7 կետերից, մասնավորապես դատապարտում է ներքին զորքերի եւ ազերի կառավարական ուժերի կողմից գործված հարձակումները հայ երեխաների, կանանց եւ այրերի վրա եւ «խոր մտավախություն» հայտնում անկախության ձգտող հանրապետություններին ճնշելու քաղաքականությունը:

Հիշեցնենք, որ մայիսի 17-ին նման մի բանաձեւ վավերացվել է նաեւ ամերիկյան սենատի կողմից, նախաձեռնությամբ Դոուլի, Լեւինի եւ այլ սենատորների: Այսպիսով, Կոնգրեսի զույգ պալատների տեսակետները նույնական են տվյալ հարցում, ինչը հեշտացնում է միացյալ մի որոշման ընդունումը ամերիկյան օրենսդիր բարձրագույն իշխանության կողմից: ■